

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Պ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հասար 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուղողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար իսկ դաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար , թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման սուրը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից Նոր Գրատունը :

Ա. Ձ Գ Ա Յ Ի Ն

Անցեալ շաբթու հրատարակեցինք գեր . Եղեակեանի կողմանէ Տիւրքիկի-եան մակամուտանք իբր վարդապետի մը վարուց վրայ Պատրիարքարան ուղղուած տեղեկագրի մը օրինակը : Կը լսեմք թէ՛ յիշեալ գիրն խառն ժողովոյ մէջ անյապաղ ուշադրութեան առնուած ըլլալով, Բ. Դանէն հրամանագիր խնդրուեր է՝ յիշեալ անձն մայրաքաղաքս բերելու համար :

— Մտերս ծանուցինք թէ՛ Գեր . Երեմիա եպիսկոպոսը վարչութեան որոշմամբ Սերաստիա պիտի երթայ՝ նոյն վիճակին առաջնորդական խնդրոյն քննութեան համար : Կստուգեմք թէ՛ Նորին գերապատուութիւնը չէ թէ յիշեալ այլ փոխառաջնորդութեան պաշտօնով Սերաստիա պիտի գտնուի, և կարապետ եպիսկոպոսն ալ մայրաքաղաքիս մէկ եկեղեցին պիտի գլխուի իբրև քարոզիչ : Սերաստիոյ հին և աղմկայցող խնդիրն այսպէս մասամբ իւրի վերջացած կըլլայ :

— Ամեն . Տեղապահ Հայրը վաղը Պէպէք բարձ . Սալի փաշայի ապարանքը պիտի երթայ , Նորին բարձ .

լութեան տեղափոխութիւնը շարհաւորելու համար :

Կյուսապ թէ , Տեղապահ Սըրբազանը այս առթիւ կիրկնէ իւր բարեխօսութիւնը , Կարնոյ գեր . Առաջնորդին անյապաղ վերադարձին համար :

— Ինչպէս կանխաւ ծանուցած էինք , Նորատունկեան միժապատիւ Յակոբիկ Էֆէնտին երէկ Եէնիգափու երթալով , դպրոցն հրաւիրեց թաղին բոլոր պատուաւոր բնակիչները , և ի ներկայութեան յիսունի չափ անձանց՝ ըստ ընարութեան խառն ժողովոյ ծանոց հետեւեալ անունները , որոնցմէ կրազկանայ թաղական խորհուրդը : (Այրբենի կարգաւ)

- | | |
|-----------|---------------------|
| Գրիգոր | աղա Խանամիրեան |
| Խաչատուր | » Ղալաբոսեան |
| Կարապետ | » Սէֆէրեան |
| Մելքոն | Էֆէնտի Պատկերհանեան |
| Յարութիւն | աղա Մուրատեան |
| Յարութիւն | » Սըլվանեան |
| Յովհաննէս | » Ալլըճեան |
| Մ . Կըլս | » Ունձեան |

Ներկայ եղողները միաբերան շարհակալութիւն յայանելով խառն ժողովոյ այս որոշման համար , ընար-

բեալ անձանց վրայ իրենց վատահո-
թիւնն յայտնեցին և դո՛հ սրտիւ մեկ-
նեցան : Թաղեցւոյ կողմանէ մամա-
ւորապէս խնդրուած է մենէ՛ հրատա-
րակել իրենց դոհունակութիւնը , զոր
ահա կատարելու պատիւն ունեցանք :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ե՛հնդ ախուի քարոզիչ արժ . Գը-
րիդորին վարդապետին վրայ տարա-
ձայնութիւն մը ելած էր թէ յիշեալ
վարդապետը քարոզի մը առ թիւ ծա-
նուցեր է որ ուղևոր դերձակուհի մը
եկեղեցւոյ բանկալը նորաձև զգեստ-
ներ դիւրազնի ի վաճառ պիտի հանէ
և այլն :

Այս տարաձայնութեան վրայ Պատ-
րիարքարանը անմիջապէս պէտք ե-
ղած քննութիւնը ի պաշտօնէ կատա-
րելով տեղեկացաւ թէ այս տարա-
ձայնութիւնը սխալ և անհիմն է , և թէ
յիշեալ վարդապետը իւր քարոզին
մէջ եկեղեցի եկողներուն սակաւու-
թիւնը գիտել տալով ըսեր է որ « ե-
թէ կարելի ըլլար եկեղեցւոյ բանկա-
լը նորաձև բաներ ծախուիլ , այն ա-
տեն Ս . Եկեղեցին աւելի բաղմունթիւն
պիտի ունենար զան թէ հիմն որ Աս-
տուծոյ խօսքերը կրուի » :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա .

Օրագրաց ոմանց մէջ երբեմն խա-
ւըն ժողովոյ մէջ իբր թէ արուած ո-
րոշումներ կհրատարակուին այնպիսի
խնդրոյ վրայ որոնց խօսքն անգամ
եղած չէ յատենի վարչութեան : Յայտ-
նել է որ խառն ժողովոյ ըրած որոշ-
մանց վրայ ի պաշտօնէ հրատարակ-
ուած լուրերը անխառն են . ուստի և

անոնց պատասխանատուութիւնը հը-
րատարակող լրագրին վրայ կմնայ :

Բ .

Առ ժամանակեայ խառն ժողովը
նոր հաստատուած ժամանակը՝ Ս .
Երուսաղիմոյ պատրիարքէն եկած
հեռագրի մը վրայ հեռահեալ նամակը
դրած էր ի դիմաց Ս . Պատրիարք Հօր
առ վսեմ . դեռագանն Անդղիոյ :

« Պարմն դեռագան

« Երուսաղիմոյ ամեն . Պատրիարք

« ըր կհեռագրէ թէ Սահակ արքեպիս-
« կոպոսը Պէլիսա կգանուի և անկէ դէր
« գրած է իր ազատութիւնը խնդրե-
« լու համար : Այս հեռագիրը Ձեր
« վսեմութեան հաղորդելով ամենայն-
« վատահոթեամբ կդիմեմ Ձեզ վասն
« ցանկալի ազատութեան յիշեալ ե-
« պիսկոպոսին : Հայոց ազգը ամբողջ
« որ խրոխտալով տեսաւ երթալն այս
« արի եկեղեցականին մարդասիրա-
« կան դորձ մը կատարելու համար ,
« անհամբեր կպայտէ անոր դարձին
« ի ծոց իւր միաբանութեան : Երախ-
« տադէտ պիտի ըլլայ Ձեզի , Պ . դեռ-
« պան , Ձեր ընելիք շանքբուն հա-
« մար ի նպատարին դերապատուու-
թեան » :

Հանձնէք ընդունիլ Պ . դեռագան ,
իմ մեծ յարգանացս հաւատարմքը

Պօղոս արք . Պատր . Հայոց

Այս նամակը առած օրը վսեմ . Պ .
Էլիեօթ իր թարգմանը գրկեր էր
ի Պատրիարքարան իր կողմէն ամեն
ապահովութիւն տալով և ընդ հուպ
դրեր էր իր կատարարութեան հա-
ղորդելով Ս . Պատրիարքին նամակը :

Այս օրերս Անդղիոյ Թարտաքին
դործոյ պաշտօնեայէն պատասխան

եկաւ գետաբնառուներ և անկէ հա-
ղորդուեցաւ ի Պատրիարքարան :

Այս պատասխանին մէջ լորս Բը-
րբէնաւրն Մնդղիոյ կառավարութեան
հաստատ կամքը կ'յայտնէ Սահակ
արքեպիսկոպոսը ազատելու համար
և ծրարեալ կղզիէ եղիպատսի Մնդղի-
ոյ ընդհանուր հիւպատոսին զրկած
հրահանդին օրինակը :

« Մնդղիական կառավարութիւնը ,
կրտէ լորս Բըրբէնաւրն , այս հրահան-
դին մէջ , ինքզինքը ըստ ամենայնի
պարտաւոր կ'ընենք որ ամեն ջանքը
նէ յիշեալ եպիսկոպոսին ազատութեա-
նը համար » :

Հետևաբար ընդհանուր հիւպա-
տոսին արտօնութիւն կուտայ որ ինչ
եղանակաւ ա ինչ միջոցներով որ ինք
հնարաւոր կկարծէ եպիսկոպոսին ա-
զատութիւնը , այն կերպով գործէ
մինչև որ այս ազատութիւնն ընդու-
նի : Միանդամացն հրահան կուտայ ա-
մեն դրամական օգնութիւն և այլ ա-
մեն նպաստ ընելու Սահակ սրբազա-
նին , բացարձակ իշխանութիւն տա-
լով այս մասին ամեն հնարք և ամեն
ծախք ընելու :

Գ.


Խառն ժողովը՝ նկատելով որ Աղ-
թամարէն մայրաքաղաքս բերել տըր-
ուած խաչատուր եպիսկոպոսին վրայ
Աղթամարցիք անհամաձայնութեամբ
այլ և այլ պահանջումներ ընելու ըս-
կրած են , նկատելով որ այս մասին
զանազան տարաձայնութիւններ երած
են աղբիւն ընդհանրութեան մէջ , և
նկատելով որ այս Աղթամարայ խնդ-
րոյն վրայ որ և է անօրէնութիւն մը ը-
նել տնտեսականիւց վարչութեան
ձեռնհասութենէն վեր է , որոշեց որ

գումարուելիք առաջին աղբ : Ընդհ-
ժողովին անմիջապէս օրուան խնդ-
րոյ կարող գրուի Աղթամարոյ խն-
դիրը , և Ընդհ . ժողովին առաջար-
կուի նորա վերջնական որոշումն ընել :

13 մարտ 1869

Ի Պատր . Հայոց կ . Պօլիս

Այս պաշտօնական յայտարարութեան
առաջին կէտը չեմք կրնար առանց դիտա-
դութեան անցնիլ : Սղգային վարչութիւնը
կրտէ թէ՛ « օրագրաց ոմանց մէջ երբեմն
աֆիսիսի խնդրոց վրայ սրբաշումներ կը
հրատարակուին , որոնց խօսքն անգամ ե-
ղած չէ յատենի Վարչութեան » : Ստի
աֆիսիսի ամբաստանութիւն մ'է , որ աղ-
ղային լրագրութեան անպատուութիւն կը
բերէ , եւ որուն դէմ Փունջն իր մասին կը
փութայ բողոքել : Սղգային Վարչութեան
պէտք էր այս ամբաստանութիւնը ազա-
ցուցանելու համար իր յայտարարութեան
մէջ գոնէ մէկ դէպք մը նշանակած ըլլալ-
այսինքն թէ՛ « այս ինչ խնդրոյն վրայ այս
ինչ հրատարակութիւնը ըրած է այս ինչ
լրագիրը , բայց խառն ժողովոյ ասեանին
մէջ խօսքն անգամ եղած չէ :



ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Աթէնքէն լուր կուտան թէ մարտ
10/22ին Յօթիատէս պէյը և անոր հետ
ընկերացող պաշտօնակալք յիշեալ քա-
ղաքը հասեր են :

— Բարձ . մեծեպարքոսը Գուր-
պանի ամնի առթիւ տէրութեան
պաշտօնեայք և բարձրաստիճան պաշ-
տօնակալները ընդունելէն վերջը՝ Պօլ-
սոյ ապարանքը թողլով Պէպէքի ա-
մարանոցը գնացեր է :

— Առևտրական գործոյ պաշտօն-
եայ մեծ . Բապուլի փաշա՝ որ անձ-
նական տկարութեան պատճառաւ

գուրս ելած չէր ատենէ մ'ի վեր, ա-
լէկցած ըլլալով իւր պաշտօնին պի-
տի սկսի:

— Բիրէէն կզրեն թէ դաղիական
սորսիզը որ Յունաստանի շուրերը
կարասէր ատենէ մ'ի վեր, քիչ օրէն
պիտի մեկնի՝ օսմանեան Արշիպեղա-
քոսը և Սարեւասանի ծովեզերքը պը-
տրտելու համար: Արդէն Ծօրպէն ա-
նուն շոգեշարժ քորվէթը այժմ Սե-
լանիկի շուրերը կզանուի:

— Կըսուի թէ Յուսա փաշայի շի-
րիմը որուն համար 5,000 ոսկի ծախք
կկարծուի, օգոստ. Սուլթանին կող-
մանէ վճարուելով պիտի կառուցուի:

— Յունաստանի դործակատար Պ.
Գալէրճի Յունաց պատրիարքին տե-
սութեան գացեր է այս օրերուս մէջ:

— Ոստիկանութեան դուռը բան-
ասարկուող կրեաացի ապստամբութեան
գլխաւորաց դատը տեսնուելով տասն
և հինգ տարուան բանտարկութեան
դատապարտուեր են: Արդէն անոնց
մէ շատը թէքսանէ զրկուեր են և մը-
նացեալք տակաւին սատիկանութեան
գուռը կզանուին:

— Եօսք կայ թէ Անգղիոյ գահա-
ժառանգ իշխանը և իշխանուհին դի-
մաւորելու պիտի երթայ մայրաքա-
ղաքին անգղիական դեսպանը: Պա-
րահանգէս մ'ալ պիտի սրուի անգ-
ղիական դեսպանատան մէջ: Արդէն
չարաթ օրը դեսպանատան պաշտօն-
եայք միաբաներ են՝ անանց մատուց-
ուելիք ուղերձը պատրաստելու հա-
մար:

— Խոսք իւզէն՝ նաւախար մը վեց
մարդ կընդունի նաւուն մէջ զանոնք
Պոլիս փոխադրելու համար: Բայց
հազիւ թէ նաւմատացէն կմեկնինա-

ւը, մէյմ'ալ նաւախարը կմարի. ա-
բանիս վրայ նաւուն մէջ գանաւող
կանայք կտարաւիւն. բայց նաւախ-
արութենէ հասկցող անձ մը որ նա-
ւուն մէջ կզանուէր, կքաշալերիէ ա-
հուդողի մէջ եզող կանայքը և նաւա-
վարին տեղը անցնելով կսկսի թիքա-
շել. նաւուն մէջ եզող սասիկանու-
թեան դիմաւոր մը պէտք եզո՞ւմ դար-
մանը կընէ մարող նաւախարին որ վեր-
ջապէս կսթափի և շորհակալ կըլլայ
դինքը դարմանող զինուորին: Վերջը
դառնալով թիքաշող անձին կհար-
ցընէ թէ արդեօք նաւախար մ'էինք:
Ո՛չ, կպատասխանէ, ես վերմակ շի-
նող մ'եմ. բայց մենք սովորութիւն
ունիմք կար կարելու, թիքաշելու,
բահ զարեւելու, և հրացան գործածե-
լու վարժուիլ: « Որչափ երջանիկ էք,
կկրկնէ նաւախարը, որ քանի մը ար-
ուեստի վարժ էք, քանի որ ես միայն
թիքաշել գիտեմ »:

— Ալանիոյ նոր սահմանադրու-
թիւնը միապետութեան վրայ հիմնեալ
է եզեր, որ երկու ժողով կահմանէ
ընդհանուր քուէով ընտրուած:

— Փարիզէն կիմնացնեն թէ տեղա-
կան սատիկանութիւնը դաւաճանու-
թիւն մը գտեր է: Երեք հոգի իւրօր-
վայոյդ ատենախօսութիւններ ըրած
ըլլալնուն համար ձերբակալ եզեր են:

— Վաշինկթընէն կիմնացնեն թէ
ձերակոյտը պաշտօնէից համար որո-
ւած մէկ օրէնքը փոխելով արա-
նութիւն կուտայ նախողահին որ և է
բարձրատախձան պաշտօնակալ մը ա-
ժամանակեայ կերպով դադրեցնել
իւր պաշտօնէն, այլ ո՛չ երբէք հրա-
ժարեցնել:

ՅՏՕՐԷՆ ՔԻ ՏԵՐՆ
Հ. Ս. Ա. Ա. Ճ. Ա. Ճ. Ա. Ճ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՐԵՃԱՆԵ